Վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար /«Հույս և ապագա» ՀԿ/

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու համար դիմող անձանց վերապատրաստում իրականացնող «Հույս և ապագա» երեխաների աջակցության և զարգացման բարեգործական հասարակական կազմակերպությունը հայտարարում է վերապատրաստումներ այն անձանց համար, ովքեր ցանկանում են ստանալ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք:

Դասընթացներին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող եւ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ ունեցող անձինք:

Դասընթացներին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում* (ձև1)՝ վերապատրաստող կազմակերպության ղեկավարի անունով (ղեկավար՝ Օ. Պողոսյան),
2. 3x4 չափսի լուսանկար,
3. բարձրագույն կրթության դիպլոմը,
4. աշխատանքային գրքույկը կամ քաղվածքը,
5. անձնագիրը,
6. մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը)
7. Կազմակերպության հաշվեհամարին (220293350256000 ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ) փոխանցված գումարի անդորրագիրը: Բնօրինակները սկանավորվում և վերադարձվում են: Դասընթացի արժեքը, ներառյալ սուրճի ընդմիջումները, կազմում է 65 000 դրամ:

Մասնակիցների փոխադրման և գիշերավարձի ծախսերը կազմակերպությունը չի հոգում:

Դիմումներն ընդունվում են 2020 թվականի սեպտեմբերի 10-ից սեպտեմբերի 27-ը ներառյալ:

Փաստաթղթերը ներկայացնել՝

Արմավիրի մարզ – ք. Արմավիր, Սոֆիկ Մինասյան (հեռ. 093 41 12 98): Դասընթացները կսկսվեն սեպտեմբերի 28-ից: Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել (094)884484, (055)600121 հեռախոսահամարներով կամ գրել apagahuys@gmail.com էլ. փոստի հասցեով:

Դիմումի նմուշը (Ձև-1) կարող եք ներբեռնել հետևյալ կայքից՝

http://www.armedu.am/arm/official.php?sec=anouns&p=2&id=548